

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ**  
**ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Գլխավոր վարչության պետի հրամանով հաստատվել է Գլխավոր վարչության 2008 թվականի գործունեությունն ապահովող միջոցառումների ծրագիր, որը ներառել է ինչպես Գլխավոր վարչության խնդիրներից և գործառույթներից բխող միջոցառումները, այնպես էլ բնագավառը կարգավորող իրավական ակտերի մշակման ժամանակացույցը:

Հաշվետու տարում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ Գլխավոր վարչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

2008 թվականի մարտի 17-ից 21-ը Գլխավոր վարչության պատվիրակությունը Փարիզում մասնակցել է Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (այսուհետ՝ ԵԿԱԿ) անդամ-պետությունների քաղաքացիական ավիացիայի վարչությունների պետերի 129-րդ ժողովին:

2008թ. հունիսի 9-ից 13-ը Երևանում է անցկացվել Միջպետական Ավիացիոն Կոմիտեի կոորդինացիոն-խորհրդատվական ավիաթշկական խորհրդի հերթական 26-րդ համաժողովը:

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերով 2008 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը ԵԿԱԿ անդամ-պետությունների քաղաքացիական ավիացիայի իշխանությունների գլխավոր տնօրենների հատուկ 57-րդ ժողովը, 32 պետությունների շուրջ 65 ներկայացուցիչների մասնակցությամբ, անցկացվել է Հայաստանի Հանրապետությունում: Ժողովի ընթացքում ընդունվել է ավիացիոն անվտանգության սարքավորումների արդյունավետության գնահատման միասնական գործընթացի համար մշակված փաստաթուղթը, որն անդամ-պետությունների համար կհանդիսանա ձեռնարկ և կապահովի ԵԿԱԿ-ի փաստաթուղթ 30-ի համապատասխան պահանջների պատշաճ կատարումը: Զննարկվել են մասնաբերական ավիացիոն արբանյակային նոր համակարգին, շրջակա միջավայրի պաշտպանությանը, Զաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) գլխավոր քարտուղարի պաշտոնում միասնական եվրոպական թեկնածուին, Միացյալ ավիացիոն իշխանությունների (JAA) և Եվրոպական ավիացիայի թռիչքային անվտանգության գործակալության (EASA) հեռանկարներին վերաբերող հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության միգրացիայի համակարգի եւ Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի եւ նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 537-Ա որոշման կատարման նպատակով Գլխավոր վարչության պատվիրակությունը 2008 թվականի հոկտեմբերի 4-ից 10-ը ԻԿԱՕ հրավերով գործուղվել է քաղաք Մոնրեալ (Կանադա)՝ մասնակցելու սարքերով ընթերցվող ճանապարհորդական փաստաթղթերի միջազգային պրակտիկային վերաբերող ԻԿԱՕ չափանիշների, կենսաչափորոշիչների և անվտանգության խնդիրների չորրորդ խորհրդատվորոշուցահանդեսին:

2008 թվականի հունիսի 20-ին Թբիլիսի քաղաքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև օդային

հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագիրը», որը ուժի մեջ է մտել 2008 թվականի հոկտեմբերի 6-ին:

2008 թվականի հուլիսի 1-ին Ռիգայում, Լատվիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունների պատվիրակությունների միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր և նախաստորագրվել է համաձայնագիրը: Ուսումնասիրվել և համապատասխան ընթացք է տրվել համաձայնագրի 8-րդ հոդվածի նոր խմբագրության վերաբերյալ լատվիական կողմից ներկայացված տարբերակը:

2008 թվականի հոկտեմբերի 30-ին Բեռնում փոխհամաձայնեցվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Շվեյցարիայի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրի» անգլերեն տեքստը:

2008 թվականի նոյեմբերի 21-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Վաշինգտոն քաղաքում, ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև օդային տրանսպորտի մասին» (բաց երկնքի) համաձայնագիրը:

2008թ. ընթացքում Գլխավոր վարչության կողմից ուսումնասիրվել և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ընթացք են տրվել Հունաստանի, Ուկրաինայի, Տաջիկստանի, Խորվաթիայի, Արգենտինայի, Չեխիայի, Սլովակիայի և Իսլանդիայի կառավարությունների հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի նախագծերը:

2008թ.-ին Գլխավոր վարչությունն իր առջև որպես կարևորագույն խնդիր էր դրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի իրավական համակարգի նորացման, ԻԿԱՕ և Եվրամիության պահանջների համապատասխանեցման, ինչպես նաև թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործումը:

Գլխավոր վարչությունը մասնակցել է Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված «ԹՎԻՆԻՆԳ» ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարներին, կազմվել է JAA անդամակցության նպատակով Միացյալ ավիացիոն պահանջների տեղայնացման և կիրառության ոլորտում Գլխավոր վարչության թռիչքների անվտանգության վերահսկողության կարողությունների բարելավման նպատակով համապատասխան ծրագրի առաջարկ և ներկայացվել ՀՀ-ում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը: «ԹՎԻՆԻՆԳ» ծրագրի ներկայացված առաջարկը հավանության է արժանացել Եվրոպական Հանձնաժողովի կողմից, որից հետո տեղի են ունեցել իրենց կողմից գործուղված փորձագետների հետ հանդիպումներ և համապատասխան փաստաթղթի մշակում:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում քաղաքացիական ավիացիայի բնագավառում «Հայաստանի Հանրապետության կառավարության և ԵՄ միջև համագործակցության կարգավորման, Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման գործողությունների ծրագրով» նախատեսված են երեք հիմնական ոլորտներ, որտեղ Գլխավոր վարչություն կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

### **1. Ավիացիոն անվտանգության ոլորտում համագործակցություն.**

- Լրացումներ և փոփոխություններ են կատարվել ոլորտը կարգավորող իրավական ակտերում՝ դրանք համապատասխանեցնելով ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից ներդրված նոր ստանդարտներին:
- Հայաստանի Հանրապետության օդանավակայանների անմաքս առևտրի խանութների գործունեությունը ԵՄ օրենսդրության համապատասխանեցման նպատակով կատարվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, որոնց հիման վրա Հայաստանի Հանրապետությունում կկիրառվեն անմաքս առևտրի խանութների գործունեությանն առնչվող ԵՄ ավիացիոն անվտանգության պահանջները և ստանդարտները:

### **2. Միացյալ ավիացիոն իշխանությունների (JAA) սահմանած կանոնների կիրառում.**

- Միացյալ Ավիացիոն իշխանություններին Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացին ԵՄ երկրների կողմից աջակցության և խորհրդատվության ստացման նպատակով Եվրոպական հարևանության քաղաքականության գործիք հանդիսացող

«ԹՎԻՆԻՆՈ» ծրագրի շրջանակներում համատեղ մշակվել է գործողությունների համապատասխան փաստաթուղթ, այն է «ՀՀ օրենսդրության մեջ և գործնականում համապատասխանեցնել և կիրառել Ավիացիոն Միասնական Պահանջները (JAR) Հայաստանին Եվրոպական թռիչքային անվտանգության համակարգին լիարժեք ինտեգրվելու համար՝ ներառյալ EASA-ի հետ համագործակցությունը և մասնակցությունը» փաստաթղթի (fiche) վերախմբագրված տարբերակը:

- «ԹՎԻՆԻՆՈ» ծրագրով նախատեսվում է աջակցել Հայաստանի Հանրապետությանը Եվրոպական միացյալ ավիացիոն իշխանությունների պահանջների կատարման և ստանդարտների կիրառման, ինչպես նաև խորհրդատվություն ստանալ JAR-երին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի և փաստաթղթերի ընդունման գործում:

### **3. Հայաստանի Հանրապետության կառավարության և ԵՄ միջև ավիացիայի ոլորտի կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ համագործակցության խորացում, ներառյալ շուկա մուտք գործելը.**

- 2008 թվականի դեկտեմբերի 9-ին Բրյուսելում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական Համայնքի միջև օդային հաղորդակցությունների որոշակի ասպեկտների վերաբերյալ (հորիզոնական) համաձայնագիրը»:
- Գլխավոր վարչության կողմից «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն նախապատրաստական աշխատանքներ են տարվել «Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման համար Կոնվենցիա»-ին (Մոնրեալ, 1999 թվականի մայիսի 28) միանալու ուղղությամբ:
- Ավիացիոն պատահարների և միջադեպերի քննությունների անկողմնակալությունը և գերատեսչական շահերի բախումից խուսափելու, վերջնական հաշվետվության պարտադիր հրապարակման նպատակով, ընդունվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշում:
- Հաստատվել է կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզավորման կարգը:
- ԵՄ երկրներում կիրառվող՝ JAA-ի JAR FCL կանոնակարգի պահանջները և ԻԿԱՕ-ի ստանդարտները բավարարելու նպատակով կանոնակարգվել է Գլխավոր վարչության բարձրագույն որակավորման հանձնաժողովի գործունեությունը և ընդունվել է «ՀՀ քաղաքացիական օդանավերի անձնակազմերի անդամների վկայականների տրման և ատեստավորման, ինժեներատեխնիկական անձնակազմի վկայականների տրման և որակավորման և օդանավերի անձնակազմերի ձևավորման կարգը»:
- Փոփոխություններ են կատարվել «ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, օդանավերի ռեգիստրի վարման ու թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման կարգում», ինչի արդյունքում ճանաչվել և կիրառվում են համապատասխան Եվրոպական Միացյալ Կանոնակարգերը (JAR), այդ թվում նաև Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության (EASA) պահանջները:
- Հաստատվել է «Օդանավակայանների կողմից թռիչք-վայրէջքների համար ժամանակահատված (ULOS) տրամադրելու կարգը»:

ԻԿԱՕ կողմից անցկացված Հայաստանի Հանրապետությունում թռիչքների անվտանգության վերահսկողության մակարդակը գնահատող (ոլորտին առընչվող շուրջ 10000 հարցաշարով) աուդիտորական ստուգումների արդյունքները 2008թ. փետրվարից հրապարակվել են ԻԿԱՕ պաշտոնական կայքում: Արդյունքում, արձանագրվել է, որ ոլորտը 96,32%-ով համապատասխանում է ԻԿԱՕ պահանջներին և ստանդարտներին: Անհամապատասխանության աստիճանը շուրջ 11 անգամ ցածր քան աուդիտ անցկացված երկրների միջինացված շեղումների ցուցանիշից:

Քաղաքացիական ավիացիայի մասով ապահովվել է ՀԱՊԿ կողմից կազմակերպված Հայաստանի Հանրապետությունում «Ռուբեժ-2008» գորավարժությունների անցկացման նպատակով տարվող աշխատանքներին, որի շրջանակներում իրականացվել է քաղաքացիական ավիացիայի համակարգում արտակարգ իրավիճակների դեպքերում գործողությունների պլանների վերանայում և ճշգրտում, ինչպես նաև ապաստարանների վիճակի ուսումնասիրում ու

նախապատրաստում՝ ստեղծված իրավիճակներում օգտագործելու համար: Աշխատանքների և քաղաքաշտպանվածության մակարդակը գնահատվել է 100 %:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են ամբողջությամբ՝ բացառությամբ Միջպետական Ավիացիոն Կոմիտեի (ՄԱԿ):

Հաշվետու ժամանակաշրջանում Կոնցեսիոների կողմից մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացրել «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների 2008-2012 թվականների Մաստեր Պլանի նախագիծ: Նախագիծը անցել է լայն քննարկումներ, մեծաքանակ շտկումներ ու ուղղումներ են կատարվել դրանում և այն ուղղված է «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների ներկայիս սպասարկումների որակի բարձրացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, «Զվարթնոց» օդանավակայանի նոր ուղևորային համալիրի հաշվառման սրահի կառուցմանը, ուղևորների սպասարկման ընթացակարգերի շարունակական պարզեցմանը, որոնք կարող են բերել ուղևորափոխադրումների աճի՝ ինչը դրական ազդեցություն կունենա տնտեսության զարգացման վրա:

2008թ ընթացքում Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են ՀՀ օդանավակայաններում իրենց գործառնություններն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Չմեռային շրջանում պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների և օդանավերի վերգետնյա էլեկտրական սնուցման միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:

2008թ. վերահսկողություն է իրականացվել ««Արմավիա»-ին ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ ներդրումային պայմանագրի» դրույթների կատարման նկատմամբ: «Արմավիա» ավիաընկերության ուղևորափոխադրումների ծավալը աճել է 13,5%-ով՝ փոխադրելով 650,0 հազար ուղևոր: Նման ցուցանիշները, առաջին հերթին, ապահովվել են ընկերության կողմից իրականացվող չվերթերի կանոնավորության պահպանման և արևմտյան արտադրության օդանավերի շահագործման շնորհիվ:

2008թ. ընթացքում Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 2803 գրությունների:

2008թ. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պաշտոնի անձնագրերում կատարվել են թվով 4 փոփոխություններ: Կազմակերպված մրցույթների արդյունքում համալրվել են թվով 5 թափուր պաշտոններ: 2008թ. ընթացքում ատեստավորվել է 12 և վերապատրաստվել 11 քաղաքացիական ծառայող: Հարցաշարերում կատարվել են փոփոխություններ՝ համապատասխանեցնելով ընդունված օրենսդրական ակտերին:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՋԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող վերջին նորությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ Գլխավոր վարչության կողմից աշխատանքներ են տարվել ՀՀ-ից օդային ուղևորների ելքի պետական տուրքի (այսուհետ՝ Պետական տուրք) գանձումն ավիատոմսերի մեջ ներառելու նպատակով օրենսդրական փաթեթի մշակման ուղղությամբ, ինչպես նաև վերահսկողություն է իրականացվել Պետական տուրքի գանձման գործընթացի նկատմամբ:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ Գլխավոր վարչության կողմից աշխատանքներ են տարվել «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտում ստեղծման հայեցակարգի մշակման ուղղությամբ:

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Փոքր ավիացիայի զարգացման» հայեցակարգը:

Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2008 թվականին դեկտեմբերի 1-ին:

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օդանավ շահագործողների պատասխանատվության ապահովագրության նվազագույն ծածկույթի սահմանաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք արժանացել են ՀՀ կառավարության հավանությանը և պետք է ներկայացվեն ՀՀ Ազգային Ժողովին:

**2008թ. ընթացքում մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հաստատվել են թվով 15 նորմատիվային, անհատական որոշումներ.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1777-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 17-ին թիվ 89 -Ն որոշումը:
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 392-Ն որոշմամբ հաստատված «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված մաստեր պլանի փոփոխությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 22-ին թիվ 289 -Ն որոշումը:
3. «Արմավիա» ավիաընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ԻԼ-86 մակնիշի օդանավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր արտահանում վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ին թիվ 419-Ա որոշումը:
4. «Օդային երթևեկության սպասարկումն ու հարակից միջոցների ապահովումն իրականացնող կազմակերպություններին ու մարմիններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 19-ին թիվ 744-Ն որոշումը:
5. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի N 202-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 28-ին թիվ 970 -Ն որոշումը:
6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1725-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ օդային երթևեկությանը այլ վտանգ սպառնալու դեպքում անհրաժեշտ միջոցառումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 11-ին թիվ 1043 -Ն որոշումը:
7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 8-ին թիվ 1144 -Ն որոշումը:
8. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 9-ի N 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզավորման կարգն ու կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ին թիվ 1252-Ն որոշումը:
9. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 2-ի N 965-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ին թիվ 1529-Ն որոշումը:

10. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ին թիվ 1533 -Ա որոշումը:
11. «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների կոնցեսիոների կողմից ներկայացված 2008-2012 թվականների Մաստեր Պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 392-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ին թիվ 1559-Ն որոշումը:
12. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի օգոստոսի 7-ի N 545-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2008թ. մարտի 31-ին թիվ 174-Ա որոշումը:
13. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի օգոստոսի 7-ի N 548-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2008թ. օգոստոսի 8-ին թիվ 597-Ա որոշումը:
14. «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի համաժողովի անդամ պետությունների քաղաքացիական ավիացիոն իշխանությունների ղեկավարների 57-րդ հատուկ ժողովը Երևանում անցկացնելու մասին» ՀՀ վարչապետի 2008 թվականի օգոստոսի 27-ի թիվ 662-Ա որոշումը:
15. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի օգոստոսի 25-ի N 562-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2008թ. սեպտեմբերի 12-ին թիվ 704-Ա որոշումը:

***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և պետական գրանցում են ստացել թվով 9 նորմատիվ իրավական ակտեր.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հունվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 25-ի N 65-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 9-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008095:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հունվարի 30-ի «Ուղեկցման ենթակա անձանց փոխադրման կարգը հաստատելու մասին» N 14-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008102:
3. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի ապրիլի 10-ի «Աերոնավտիկական արտադրատեսակների ռեսուրսների երկարաձգման կարգը սահմանելու մասին» N 37-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008137:
4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 10-ի N 54-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 156-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008334:
5. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 9-ի N 41-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 153-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008335:
6. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 20-ի N 62-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 152-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008336:
7. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մայիսի 14-ի N 79-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 154-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008337:

8. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 247-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 155-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32008338:
9. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2008 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 192-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 188-Ն հրամանը, պետական գրանցում թիվ 32009002:

### **ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

2008 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 9 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 34 օդանավ: Օդանավերի գրանցումից հանելու հիմնական պատճառ է հանդիսացել դրանց նկատմամբ թռիչքային սահմանափակումների ուժի մեջ մտնելը:

#### **Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են.**

- քաղաքացիական օդանավի գրանցման 35 սերտիֆիկատ,
- քաղաքացիական օդանավի ապագրանցման 32 սերտիֆիկատ,
- քաղաքացիական օդանավի պիտանիության 75 սերտիֆիկատ,
- օդանավի ադմուլի 13 սերտիֆիկատ,
- օդանավի ռադիոկայանի 75 լիցենզիա:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել 4 միջադեպ և 1 պատահար ՀՀ-ում գրանցված օդանավերի հետ և 1 պատահար ու 1 միջադեպ ՀՀ-ից դուրս գրանցված օդանավերի հետ, որոնց մասնագիտական քննություններն իրականացրել կամ մասնակցել են Գլխավոր վարչության մասնագետները:

Գլխավոր վարչության կողմից կատարվել է օդանավերի թվով 60 տեսչական թվով 15 ավիացիոն գործունեություն իրականացնող ընկերությունների պլանավորված ստուգումներ: Ստուգումների արդյունքում ի հայտ եկած թերությունների մասին տեղեկացվել է համապատասխան օդանավ շահագործողներին և տրվել են հանձնարարականներ թերությունների վերացման ուղղությամբ:

Գլխավոր վարչության մասնագետները օդաչուների թռիչքավարման տեխնիկայի ստուգման և անձնակազմի անդամների օդում գործնական աշխատանքի գնահատման նպատակով իրականացրել են թվով 7 թռիչքային տեսչական ստուգումներ:

Ուսումնասիրվել են ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 122 հայտեր, որոնցից 119-ին տրվել են փոխադրման թույլտվություններ, իսկ 3 հայտով ներկայացված փոխադրման ենթակա վտանգավոր բեռներն ԻԿԱՕ «Օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման տեխնիկական հրահանգով» սահմանված կարգով քաղաքացիական օդանավերով փոխադրումն արգելված լինելու պատճառով մերժվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում Գլխավոր վարչությունը շարունակել է իր համագործակցությունը միջազգային ավիացիոն կազմակերպությունների հետ թռիչքային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով: Մասնավորապես.

- Գլխավոր վարչության մասնագետները մասնակցել են Միացյալ Ավիացիոն Իշխանությունների (JAA/EASA) կողմից կազմակերպված միջազգային համագործակցությանը վերաբերվող կոնֆերանսին:
- Գլխավոր վարչության մասնագետները որակավորման բարձրացման և վերապատրաստման նպատակով մասնակցել են Սինգապուրի ավիացիոն ակադեմիայի կողմից անցկացված «Թռիչքների անվտանգության վերահսկման տեսուչ (տեխնիկական

սպասարկում)» թեմայով և SAFA ծրագրով անցկացված դասընթացներին և ստացել համապատասխան սերտիֆիկատներ,

- Գլխավոր վարչության 2 մասնագետ-տեսուչներ մասնակցել են ՄԱԿ-ի կողմից կազմակերպված սեմինարներին:

### **ԹՈՒՉՔԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏ**

Հայաստանի Հանրապետությունում գրանցված քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիությունը և թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով 2008թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 876 թռիչքային անձնակազմի անդամների, ինժեներատեխնիկական կազմի, բորտուղեկցորդների և օդային երթևեկության կարգավարների վկայականներ և այլ թույլտվություններ:
- Մշակվել է ՄԻ-8ՄՏՎ-1 ուղղաթիռով ավիացիոն քիմիական աշխատանքների իրականացման ծրագիր, որի հիման վրա ՄԻ-8ՄՏՎ-1 ուղղաթիռով իրականացվել է շուրջ 150 ժամ ավիացիոն քիմիական աշխատանքներ:
- Իրականացվել է Հայաստանի Հանրապետության ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման թվով 9 կազմակերպությունների սերտիֆիկացում:
- Տրամադրվել է օդանավերի Եվրոպական տարածաշրջանում RNAV զոնալ նավիգացիայի համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 23 և RVSM համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 10 թույլտվություններ:
- Ուսումնասիրվել և տրվել է ավիացիոն տեխնիկայի ռեսուրսների թվով 37 հայտերի թույլտվություններ:
- Կատարվել է ELT վթարային թվով 8 ռադիոփարոսների գրանցում ԿՈՍՊԱՍ-ՍԱՐՍԱՏ համակարգում:
- Ըստ հայտերի մշակվել և շահագործողներին տրամադրվել է թվով 7 օդանավերի 24-բիտանոց հասցեներ:
- Իրականացվել է Ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման թվով 15 կազմակերպությունների տեսչական շահագործողական ստուգումներ:
- Իրականացվել են թռիչքավարության, կարգի բարձրացման և ինքնուրույն աշխատանքների թույլտվության ստուգողական թռիչքներ:

### **ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ**

Օդանավակայանների սետիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Վերահսկողություն է սահմանվել ԻԿԱՕ-ի N15 Հավելվածի պահանջների կատարման նկատմամբ՝ կապված ՀՀ ամբողջ տարածքի, ինչպես նաև աերոդրոմների շրջանների խոչընդոտների թվային բազայի ստեղծման հետ: ՀՀ Գեոդեզիայի և քարտեզագրման ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ:
- Առաջարկություններ է ներկայացվել ԻԿԱՕ-ի NN10, 11 և 14 Հավելվածներում և ՄԱԿ-ի «Ավիացիոն կանոններում» առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:
- Վերլուծվել են ուղղաթիռային թռիչքների թռիչքային կանոնները և համապատասխան առաջարկություններ ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն:
- Ուսումնասիրվել և առաջարկություններ են ներկայացվել Վայոց Ձոր մարզի Ջերմուկ քաղաքում օդանավակայան և ուղղաթիռադաշտ կառուցելու վերաբերյալ: Ուղղաթիռադաշտ կառուցելու նպատակով իրականացվել են տեղանքի ուսումնասիրություններ և նախնական ընտրություն:
- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում նախատեսվող վերահսկող անձնակազմի վերապատրաստման ծրագրի վերաբերյալ:



- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել Վրաստանի հետ օդային սահմանների վերանայման հարցի վերաբերյալ:
- «Հայաերոնավիգացիա» ՓԲ ընկերության հետ համատեղ ուսումնասիրվել և ներդրվել է P3-D դիտարկման համակարգը:
- Հաստատվել է «Օդային երթևեկության կառավարման միավորման կարգավարների վարժանքի» ծրագիրը:
- Հաստատվել են «Զվարթնոց Հենդլինգ» ընկերության օդանավերի սառցակալման հեռացման աշխատանքների և կառամատույցում անվտանգության ապահովման ձեռնարկները:
- Ապահովվել է ընկերությունների կողմից ներկայացված NOTAM-ների և ՀՀ ԱՏԺ-ում փոփոխությունների հրապարակումը:
- Վերլուծվել է «Արմավիա» ավիաընկերության առաջարկությունը և հնարավորությունը «Զվարթնոց» օդանավակայանի վազբուղու 265 մագնիսական ուղղվածությամբ լուսաազդանշանային համակարգի տեղադրման, ինչպես նաև «A» դեկոդու վերագործարկման վերաբերյալ և տրվել է համապատասխան եզրակացություն:
- Աշխատանքներ են տարվել «Ստեփանակերտ» օդանավակայանի աերոդրոմի վերագործարկման հետ կապված: Մշակվել են տեխնիկական առաջադրանքներ աերոդրոմի տարրերի վերանորոգման և մականշման համար:
- ՀՀ տարածքի տարբեր մարզերում բջջային հեռախոսակապի ալեհավաք կայաների տեղադրման նպատակով իրականացվել են ուսումնասիրություններ և տրվել են թվով 17 համապատասխան եզրակացություններ:

### **ՕԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ**

Օդային փոխադրումների կարգավորման և լիցենզավորման նպատակով 2008 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հաշվետու ժամանակաշրջանում թվով 3 իրավաբանական անձանց տրվել է Շահագործողի սերտիֆիկատ, իսկ թվով 9 օդանավ շահագործողների համար երկարացվել է Շահագործողի սերտիֆիկատի գործողության ժամկետը: Միջույն ժամանակ թվով 4 օդանավ շահագործողների տրվել է Ավիափոխադրողի սերտիֆիկատ (Մասնագիր) և թվով 3 (երեք) ավիաընկերության տրվել է կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզիա:

Իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Հայաստանի Հանրապետություն չվերթեր իրականացնող օտարերկրյա ավիափոխադրողների 2008 թվականի ձմեռային չվացուցակի փոփոխման և ամառային չվացուցակի հաստատման, ինչպես նաև 2008/2009 թվականների ձմեռային չվացուցակի հաստատման աշխատանքներ:

Օտարերկրյա ավիաընկերությունների Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և չարտերային չվերթների իրականացման նպատակով կազմակերպվել է ընթացակարգային գործընթացներ՝ համաձայն օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի, արձանագրությունների և փոխըմբռնման հուշագրերի:

Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված հայտերի համաձայն «Արմավիա»-Ավիաընկերություն ՍՊԸ-ին և «Էյր Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրել են միջազգային օդային ուղիներով կանոնավոր և չարտերային չվերթերի կատարման համապատասխան թույլտվություններ:

Իրականացվել է Հայաստանի Հանրապետություն/ից իրականացված չվերթերի, ուղևորահոսքերի փոխադրումների շուկայի ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ըստ փոխադրումների իրականացման տարածաշրջանների, երկրների և քաղաքների: Արդյունքում իրականացվել է շուկայի կարգավորում՝ ըստ հաճախականությունների և օդանավերի տիպերի:

### **ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրվել և հաստատվել են «Ավիաուսումնական կենտրոն» և «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերությունների աշխատակիցների նախնական պատրաստման և վերապատրաստման ավիացիոն անվտանգության, որոնողափրկարարական և

օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման աշխատանքների ուսումնական ծրագրերը:

Ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ են իրականացվել «Ավիասերվիս» և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերություններում, որոնց արդյունքները ներկայացվել են վերը նշված ընկերություններին, բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար:

Քննարկվել և հաստատվել են թվով 12 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը:

2008թ. ընթացքում Մոսկվա քաղաքի ԻԿԱՕ ավիացիոն անվտանգության տարածաշրջանային ուսումնական կենտրոնում վերապատրաստվել է 4 աշխատակից, ԻԿԱՕ-ի կողմից կազմակերպված սեմինարարներին մասնակցել է՝ 1 աշխատակից:

Մշակվել և քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպություններ է ուղարկվել.

- քաղաքաշտպանությունում և արտակարգ իրավիճակների մասով կազմակերպչական ցուցումներն ու տարեկան միջոցառումների պլանը,
- Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և/կամ ճառագայթային վթարների դեպքում Գլխավոր վարչության, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների և ուղևորների պաշտպանության կազմակերպման պլանը:

2008թ. ընթացքում քաղաքացիական ավիացիայի համակարգի ընկերություններում իրականացվել են վթարափրկարարական ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- կազմակերպվել են պարապմունքներ «Արմավիա», «Էյր Արմենիա» ավիաընկերությունների օդաչուական և ուղեկցող անձնակազմների հետ,
- ստուգվել է օդանավակայանների վթարափրկարարային խմբերի հետ թեմատիկ գործնական պարապմունքների անցկացման ընթացքը,
- պարբերաբար ստուգվել է օդանավակայանների վթարափրկարարային հաշվարկների մարտունակությունը, օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքն ու հանդերձանքի վիճակը,
- «Զվարթնոց» օդանավակայանում կազմակերպվել և անցկացվել է վթարափրկարարային ծառայության տեսական ուսումնավարժանք (12.12.2008թ.) և հայտարարվել է 15 փորձնական տազնապ:

Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 44 Լիտեր «Ա» և 16 հատուկ չվերթերի սպասարկում:

2008թ. ընթացքում ՀՀ քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գլխավոր վարչության համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2008թ. ընթացքում ամբողջությամբ վճարվել են շահութաբաժինների գծով ՀՀ պետական բյուջեին ունեցած պարտավորությունները: 2008 թ. Ստեփանավան» օդանավակայան» ՓԲ ընկերությունը ներկայացվել է մասնավորեցման:

Գլխավոր վարչության կողմից քննարկվել են օդանավակայանային ծառայությունների մատուցման սակագների փոփոխման հայտերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել հաստատման ու հրապարակման:

### **«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ**

Ընթացիկ գործունեության բարելավման և զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Եվրոկոնտրոլի հետ համատեղ մշակվել և ներդրվել է օդային երթևեկության հոսքի կազմակերպման (ՕԵՀԿ/ATFM) և համաձայնեցման կարգավարական կետ, որը

հնարավորություն է տալիս կառավարել օդային երթևեկության հոսքերը ՀՀ օդային տարածքում:

- Հարևան պետությունների համապատասխան անրոնավիզացիոն ծառայությունների հետ բանակցությունների արդյունքում որոշակի փոփոխությունների են ենթարկվել օդային մայրուղիները, որոնք հնարավորություն են ընձեռում ընկերության ՕԵԿ կարգավարներից գերծ մնալ լրացուցիչ սահմանափակումներից օդային երթևեկության սպասարկման ընթացքում:
- Իրականացվել ԱՏԾ «ISO 9001:2000» ՈԿՀ վերասերտիֆիկացում և ստացվել է նոր սերտիֆիկատ, որի գործողության ժամկետը մինչև 2011թ. հունվար ամիսն է: 2008թ. դեկտեմբերի 8-9-ը անցկացվել է ՈԿՀ տարեկան աուդիտը:
- Պատրաստվել և վարվում է Եվրոկոնտրոլի անրոնավիզացիոն տեղեկատվության (EAD) համակարգի SDO բազան:
- Ավարտվել է գերկարճալիք ռադիոկայանների արդիականացման 2-որդ փուլը: Տեղադրվել են «Pork-Air» համակարգի նոր ռադիոկայաններ Մոսկվայի վերահաղորդիչ կենտրոնում, «Անդրանիկ» ռադիոկայանում և ռադիոհաղորդիչ կենտրոնում:
- Ավարտվել է բազմադիրքային P3D համակարգի ինտեգրումը և փորձնական շահագործումը և համակարգը շահագործվում է օդային երթևեկության կառավարման համար:
- Կատարվել է Երևանի «P3D» հարցասարքի արդիականացումը, հզորացվել է հարցումը մինչև 1,6 ԿՎտ, ինչն էլ բարելավել է Հայաստանի Թռիչքա Տեղեկատվական Շրջանի ծածկույթը:
- Որպես պահուստային աշխատանքային տեղեր հիմնվել և շահագործման է հանձնվել ավտոմատացված «Мастер» աշխատանքային տեղը ՇԿԿ-ի և ՄԿԿ-ի համար:
- Տեղադրվել նոր Գերկարճալիք ալեհավաքներ վթարային ռադիոկայանների համար:
- Սկսվել է կապի ծառայության արդիականացման 1-ին փուլը: Տեղադրվել են նոր միկրոալիքային ռադիոռելեային կայաններ «Անդրանիկ» ռադիոկայանում, ՄՈՒՀ-ում և Էրեբունի օդանավակայանում: Ինչպես նաև խտացուցիչներ, որպեսզի բարելավվեն կապի հուսալիությունն ու որակը:
- Իրականացվել է ՄՈՒ-11 համալիրի օդորակիչային և օդափոխության համակարգերի արդիականացումը:
- Սկսվել է տեխնիկական շենքի շինարարությունը «Մոսկվայի» կենտրոնում:
- ԻԿԱՕ ուսումնական կենտրոններում իրականացվել է թվով 50 ՕԵԿ կարգավարների, հրահանգիչ կարգավարների մասնագիտական և անգլերեն լեզվի վերապատրաստում: 2008թ. արձանագրվել է ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթերի քանակի կայուն աճ՝ կազմելով 32282 տարանցիկ չվերթ, նախորդ տարվա 29155 տարանցիկ չվերթի փոխարեն: 2008թ. օրական միջին հաշվով սպասարկվել է 88 չվերթ, նախորդ տարվա 80 չվերթի փոխարեն:

### **«Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ**

2008թ. ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 165 օդաչու, 130 բորտուղեկցորդ, 105 կարգավար, 2453 վերգետնյա աշխատողներ, իրականացվել է 28588 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2209 սանիտարական հետազոտություն:

2008թ. ընթացքում Միջպետական Ավիացիոն Կոմիտեի կողմից ընկերության ավացիոն բժշկության գործունեության հավաստագիրը երկարացվել է ևս 5-ը տարով:

### **Ավիաուսումնական կենտրոն ՓԲԸ**

Ավիաուսումնական կենտրոնի գործունեության հիմնական նպատակը քաղաքացիական ավիացիան բարձրորակ կադրերով համալրելն է, կրթական գործընթացն արտադրությանը մոտեցնելը, միջազգային ավիացիոն կազմակերպությունների և գործատուների պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելը, որով և պայմանավորված է քաղաքացիական ավիացիայի անվտանգ և ապահով գործունեությունը: Ընկերությունը իրականացնում է միջին մասնագիտական կրթությամբ ավիացիոն կադրերի պատրաստում «Օդային երթևեկության կառավարում» մասնագիտությամբ՝ վերջին 3 տարում տալով 23 շրջանավարտ:

2007թ. թվականին ՀՀ կառավարության ապրիլի 19-ի N 529 որոշմամբ Ավիատրանսպորտի կենտրոնի քոլեջին տրամադրվել է 15 անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցմամբ) տեղ, որը խթան հանդիսացավ ուսանողների քանակի աճին: 2007թ. ընդունվել են 47 ուսանող, այդ թվում՝ 15-ը պետպատվերով: 2008թ. ընդունվել են 57 ուսանող, այդ թվում՝ 15 պետպատվերով: 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավիատրանսպորտի կենտրոնի քոլեջում սովորում է 104 ուսանող:

Կենտրոնի գերակա խնդիրը եղել և մնում է կոմերցիոն օդաչուների ուսումնավարժանքային թռիչքների իրականացումը: Արմատականորեն փոխվել են կրթության չափորոշիչները, ուսուցման մեթոդներն ու պահանջները: Վերանայվել են կրթական բոլոր ծրագրերը, կազմվել են օդաչուների և ավիատեխնիկների պատրաստման ուսումնական և թռիչքային ձեռնարկներ /նաև անգլերեն լեզվով/, թեստեր, հարցաշարեր՝ JAA-ի պահանջներին համապատասխան: Լիցենզավորվել է ևս մեկ միջին մասնագիտական կրթությամբ մասնագիտություն «Թռչող հարմարանքների և շարժիչների տեխնիկական շահագործում»՝ ավիատեխնիկի որակավորմամբ:

Հաշվետու տարում երկու դասախոս վերապատրաստվել է Մոսկվայում ICAO-ի և IATA-ի կողմից արտոնագրված հաստատություններում:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

2008թ. արձանագրվել է Հայաստանի Հանրապետության ավիացիայի արտադրական ցուցանիշների աճ: Հատկանշական է, որ ուղևորափոխադրումների ծավալների աճն արձանագրվում է վեցերորդ տարին անընդմեջ: Այսպես, եթե 2005թ. նախորդ տարվա համեմատ ուղևորափոխադրումները աճել էին 2.5%, 2006թ.՝ 1.2%, 2007թ.՝ 19.9%, իսկ 2008թ. այն կազմել է 7,21%: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ «Զվարթնոց» օդանավակայանից ուղևորափոխադրումների աճը 2008թ. կազմել է 6,91%: Նման աճի տեմպերին զուգահեռ, ՀՀ-ից մեկնող և ՀՀ ժամանող ուղևորների թվերի տարբերությունը գրեթե կայունացել է:

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի 2006-2008 թվականների հիմնական արտադրական ցուցանիշներ*

*Աղյուսակ 1*

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2006թ.	2007թ.	2008թ.
1	Փոխադրված ուղևորներ	հազ. մարդ	1172.1	1405.6	1506.97
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	9294	10010.2	10839
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	7104	8119	8791
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր	չվերթ	26741	29155	32282

***Հարցեր որոնք կարող էին լուծում ստանալ 2008 թվականին***

1. Գլխավոր վարչության կողմից իրականացվող տեսչական և շահագործողական ստուգումների ժամանակ արագ արձագանքման համար անհրաժեշտ է օրենսդրական դաշտում լիարժեք լուծումներ տալ:
2. Ավիացիոն անվտանգության ծառայության աշխատակիցների ատեստավորման գործընթացը կազմակերպելու համար լիարժեք հնարավորություն չի եղել:
3. Չնայած, որ ՀՀ-ում թռիչքային անվտանգության կանոնները լիարժեք կիրառվում են, JAA անդամակցության հարցը հնարավոր չեղավ լուծել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ  
29-Ի No. 1440-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Միջոցառման անվանումը	Արդյունքը
<p>79. «Օդային երթևեկության սպասարկումն ու հարակից միջոցների ապահովումն իրականացնող կազմակերպություններին ու մարմիններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Օդային երթևեկության սպասարկումն ու հարակից միջոցների ապահովումն իրականացնող կազմակերպություններին ու մարմիններին թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» <b>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 19-ին թիվ 744-Ն որոշմամբ:</b></p>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի  
 №. 870-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ  
 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Միջոցառման անվանումը	Արդյունքը
<p>42. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1725-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ օդային երթևեկությանը այլ վտանգ սպառնալու դեպքում անհրաժեշտ միջոցառումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1725-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ օդային երթևեկությանը այլ վտանգ սպառնալու դեպքում անհրաժեշտ միջոցառումների իրականացման կարգը սահմանելու մասին»  <b>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 11-ին թիվ 1043 -Ն որոշումը: 2008թ. հունիսի 19-ին թիվ 744-Ն որոշմամբ:</b></p>
<p>43. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը:</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»  <b>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 8-ին թիվ 1144 -Ն որոշմամբ:</b></p>
<p>51. «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների կոնցեսիոների կողմից ներկայացված 2008-2012 թվականների Մաստեր Պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 392-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը:</p>	<p>«Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների կոնցեսիոների կողմից ներկայացված 2008-2012 թվականների Մաստեր Պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 392-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»  <b>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ին թիվ 1559-Ն որոշմամբ:</b></p>
<p>130. «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:</p>	<p>«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:</p>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի  
 No. 870-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ  
 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Միջոցառման անվանումը	Արդյունքը
1. Հայաստանի Հանրապետությունում «փոքր ավիացիա» ստեղծելու վերաբերյալ հայեցակարգի մշակում	Հաստատվել է ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 8-ի թիվ 1 նիստի արձանագրային որոշմամբ
2. Գյումրու «Շիրակ» օդանավակայանի աներոդրոմի սերտիֆիկացում	Օդանավակայանը սերտիֆիկացված է
3. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև օդային տրանսպորտի մասին համաձայնագրի ստորագրում	Համաձայնագիրը ստորագրված է
4. Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրում	Համաձայնագիրը ստորագրված է
5. Հայաստանի Հանրապետության կառավարության և Թայլանդի Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրում	ՀՀ կառավարության 2009 թ. հունվարի 8-ի N 5-Ն որոշմամբ հանվել է ցանկից